— Գիտեմ:

— Դուք ասացիք, որ հրէից լեզուն նոյնպէս իմանում էք:

— Իմանում եմ:

— Ի՞նչ պէտք էին ձեզ այդ լեզուները:

— Իմ ընտրած առարկան չէր կարելի, առանց այդ լեզուների գրականութեան հետ լաւ ծանօթ լինելու, հիմնաւոր կերպով ուսումնասիրել:

Նրա դէմքը փայլում էր, ինչպէս փայլում է դէմքը մի աղքատի, երբ գանձ է գտնում: Ես այժմ մի առանձին յարգանքով էի նայում նրա վրայ, որին առաջ մի մեծ բանի տեղ չէի դնում: Նա հին լեզուներ գիտէր, նա հին, գործածութիւնից ընկած, տառերի վերծանութիւնն էր իմանում: Նա սովորել էր եւ մի առարկայ, մի գիտութիւն, որի մասին ինձ ոչինչ չյայտնեց: Դարձեալ մի գաղտնիք, դարձեալ մի հանելուկ, որ մնում էր ինձ լուծել...

Զարմանալի բան է, թէ ինչպէս մարդ մի նոր կերպարանք է ստանում մեր աչքում, երբ փոխում ենք մեր նախապաշարմունքը, մեր կարծիքները նրա մասին: Առաջ, երբ ես համարում էի նրան մի հասարակ գործիչ, թէեւ լաւ ձիաւոր եւ քաջ երիտասարդ, նա բոլորովին այլ տպաւորութիւն էր գործում իմ վրայ: Իսկ այժմ, երբ նայում էի նրա վրայ, որպէս մի ուսումնական անձի վրայ, ամէն ինչ նրա մէջ փոխուած էի տեսնում: Նրա դէմքի արտայայտութիւնն անգամ փոխել էր իմ աչքում: Վաղեմի խստութիւնը մեղմացել էր, եւ ես նշմարում էի այնպիսի խորին, անբացատրելի գծեր, որպիսիները կարդում էր նա այն խորհրդաւոր մագաղաթների վրայ, որ բռնած էր իր ձեռքում: Այժմ նրա ձայնն անգամ այլապէս էր հնչում, քան թէ առաջ, մի անուշ, սրտի խորքը թափանցող ձայն, որ ջերմ համակրանք էր ազդում: Այժմ նրա խելացի աչքերի խորութեան մէջ նկատում էի ես անսահման հեզութիւն, անսահման առաքինութիւն, ներշնչուած բարձր, աստուածային գաղափարներով:

Նա այնպէս երկիւղով եւ զգուշութեամբ էր շօշափում մագաղաթի ցեցակեր թերթերը, որ, կարծես թէ, դիպչում էր իր սրտի ամենանուրբ թելերին: Մի փոքրիկ կտոր նրանցից պատռելիս, նրա սրտից մի բան պատռւում էր եւ ամբողջ մարմնով դողում էր նա: Ինձ թւում էր, որ միանգամից նա փափագում էր իմանալ, թէ ինչե՞ր էին թաքնուած այն հին, մոռացուած թերթերի մէջ:

Ես ընդհատեցի նրա պարապմունքը, հարցնելով.

— Ասլանը շա՛տ ուշացաւ:

— Ի՞նչ զարմանալու բան կայ, — պատասխանեց նա ժպտալով, — բժիշկ եւ կաթողիկոս, ի հարկէ, միշտ նիւթ կը գտնեն խօսալու: Ձեզ հետ դանակ ունէ՞ք, — փոխեց նա խօսքը: